ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ՀԲՄԾՁԲ-7/2-8 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 02-ը ապրիլի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արեգ Արշակյան» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ն. Ղազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 07.03.2018թ. կնքված № ՀԲՄԾՁԲ-7/2-8 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով կողմերը որոշեցին Բերդի տարածաշրջանի հացաթխման ծառայության մատուցման միավորի գինը նվազեցնել և սահմանել 102 ՀՀ դրամ:

1.2 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **6 344 400 (վեց միլիոն երեք հարյուր քառասունչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ,** որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 20.12.2019թ (Հավելված N 2):

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Վաճառողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Արեգ Արշակյան» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | Ք. Երևան, Ն. Զարյան 24 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2052122104421001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00088588 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Ն. ՂԱԶԱՐՅԱՆ |

2/Ա. Ց. Հ/Վ. 0031

Հավելված N 1
№ ՀԲՄԾՁԲ-7/2-8 գնման պայմանագրի N3 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների | Չ/մ | Քանակը | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/ | Ծառայությունների մատուցումը ըստ կիսամյակների 2019թ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 1-ին կիսամյակ |
| **1** | **Բերդի տարածաշրջան, այդ թվում** | կգ | **62200** | **102** | **6344400** | **62200** |
| 1 | Բերդ - 51036 զորամաս | կգ | 62200 | 102 | 6344400 | 62200 |

Հավելված N 2
№ ՀԲՄԾՁԲ-7/2-8 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների | *Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ. | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| **1** | **Բերդի տարածաշրջան, այդ թվում** | **3172200** | **6344400** | **6344400** | **6344400** | **6344400** | **6344400** | **6344400** | **6344400** | **6344400** |
| 1 | Բերդ - 51036 զորամաս | 3172200 | 6344400 | 6344400 | 6344400 | 6344400 | 6344400 | 6344400 | 6344400 | 6344400 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:* CPV-ի կոդը՝ 98391170/45/15/1

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՊԱՊԱՐՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Արեգ Արշակյան» ՍՊԸ
Ք. Երևան, Ն. Զարյան 24
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052122104421001
ՀՎՀՀ 00088588

տնօրեն

Ն. ՂԱԶԱՐՅԱՆ